# «Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի օգոստոսի 28-ի N 1101-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«------» --------------------- 2017 թվական N ------Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 28-Ի N 1101-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի օգոստոսի 28-ի **Ավտոգազալիցքավորման ճնշակայանների (ԱԳԼՃԿ) կառուցման և շահագործման նվազագույն պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին** N 1101-Ն որոշման հավելվածում կատարել հետևյալ լրացումները`

1) 6-րդ կետը լրացնել նոր` «17»-րդ ենթակետով հետևյալ բովանդակությամբ`

«17) **Ճնշման կարգավորիչ.** ավտոմատ կարգավորման համակարգ, ելքում պահպանելով հաստատուն ճնշում 19,6 ՄՊա առավելագույն արժեքով և ±1% չափման առավելագույն հարաբերական սխալանքով,մուտքային 19,6-27,5 ՄՊա ճնշման արժեքների դեպքում:Համակարգը տեղադրվում է մինչև գազալիցքավորման աշտարակը:»:

2) 18-րդ կետում «հսկիչ» բառից հետո լրացնել «կարգավորիչ» բառը:

3) 87-րդ կետի 2-րդ ենթակետը լրացնել նոր նախադասությամբ հետևյալ բովանդակությամբ՝

«Լիցքավորվող գազի ջերմաստիճանի և ճնշման վերաբերյալ տեղեկությունները էլեկտրոնային հանգույցից պետք է առցանց փոխանցվեն Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարություն, այդ նպատակի համար կիրառելով կապի հնարավոր տարատեսակները,խախտման դեպքում կդադարեցվի լցավորման գործընթացը, իսկ խախտում կատարած կազմակերպության վերաբերյալ տեղեկատվությունը կփոխանցվի Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության շուկայի և սպառողների շահերի պաշտպանության պետական տեսչություն՝ վարչարարություն իրականացնելու նպատակով.»:

4) լրացնել նոր՝ «154»-րդ կետով հետևյալ բովանդակությամբ՝

«154.Ճնշման կարգավորիչը անընդհատ իրականացնում է ելքային ճնշման չափումներ  և առցանց ուղարկում է ինֆորմացիան համակարգչին, համակարգիչը  կարող է փոփոխել կարգավորիչի ելքային արժեքը մինչև 19,6 ՄՊա: Ճնշման կարգավորիչը համարվում է չափողական համակարգ, պետք է ստուգաչափված և կապարակնքված լինի, բացառելով արտաքին միջամտությունը:Կապարակնքման սխեման հաստատվում է կարգավորիչի տեսակի հաստատման ժամանակ:»

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ КАРЕН

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ